# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՀՀ-4547-ՄԱՕՏ-20/24

ք.Երևան «29» 06 2020 թ.

Արմավիրի մարզի տարածաշրջանի Գյոլեմեզյան համայնքը, ի դեմս համայնքի ղեկավար Մհերսեյան Զորատ Հերմանի (այսուհետև «Պատվիրատու») մի կողմից, և ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ – ը, ի դեմս փոխտնօրեն Վ. ԴԱՎԹՅԱՆԻ մյուս կողմից (այսուհետև «Պատվիրառու») կազմեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## *1. Պայմանագրի առարկան*

Հողի բերրիության և մշակաբույսերի բերքատվության բարձրացման նպատակով Գյոլեմեզյան բնակավայրի մշակելի հողատարածքի ագրոքիմիական դաշտային ու լաբորատոր հետազոտության կատարում, ագրոքիմիական քարտեզի և մշակաբույսերի պարարտացման երաշխավորագրի կազմում և հանձնում համայնքին՝ օգտագործման համար:

## *2. Կողմերի պարտականությունները*

### *2.1. Պատվիրատուն պարտավորվում է*

2.1.1. Ստեղծել համապատասխան պայմաններ ագրոքիմիական դաշտային հետազոտությունը (հողանմուշների վերցման աշխատանքները) սահմանված կարգով կատարելու համար:

2.1.2. Համայնքի մշակովի հողատարածքի դաշտային հետազոտման, հողանմուշի լաբորատոր փորձաքննության կատարման, ագրոքիմիական քարտեզի և պարարտանյութերի կիրառման երաշխավորագրի կազմման համար՝ պատվիրառուին վճարել 80.000 դրամ:

2.1.3. Վճարումը կատարել փոխանցման եղանակով կամ կանխիկ, հետազոտական աշխատանքների ավարտման վերաբերյալ կատարողական ակտ կազմելուց հետո:

### *2.2. Պատվիրառուն պարտավորվում է*

2.2.1. Սահմանված կարգով կատարել համայնքի մշակելի հողատարածքի ագրոքիմիական դաշտային և լաբորատոր հետազոտություններ:

2.2.2. Հետազոտման արդյունքների հիման վրա կազմել և նոյեմբեր - դեկտեմբեր ամիսներին համայնքի օգտագործմանը հանձնել հողի բերրիության և բույսերի սննդառության համար կարևոր սննդատարրեր հանդիսացող ազոտի, ֆոսֆորի և կալիումի

պարունակության ագրոքիմիական քարտեզ և երաշխավորագիր մշակաբույսերի պարարտացումը արդյունավետ ձևով կատարելու համար, միաժամանակ իրականացնել մասնագիտական օգնություն դրանց ճիշտ օգտագործման հարցում:

3. Պայմանագրում չնախատեսված հարցերը կարգավորվում են փոխադարձ համաձայնությամբ:
4. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2020 թ. դեկտեմբերի 29-ը:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ՊԱՏՎԻՐԱՌՈՒ |
|---|---|
| Արարատյան տարածաշրջան | «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ |
| Արարատյան համայնքապետարան | ք. Երևան, Էրեբունի 12 |
| | ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ |
| Հ/հ 900252109187 | Հ/հ 900018003872 |
| ՀՎՀՀ 06954104 | ՀՎՀՀ 01805817 |
| ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. Ղազարյան | ՓՈԽՏՆՕՐԵՆ Վ. ԴԱՎԹՅԱՆ |
| Կ.Տ. | Կ.Տ. |